



Ա Ր Ա Ր Ա Տ Տ Տ Տ Տ

ԹԻՒ ԺՈ. — ԵՐԶԱԿԱ ԺԶ. 1883 ՏԱՐԻ ԺԶ. ՆՈՅԵՄԲԵՐ 30

## ՊԱՏՄԱԿԱՆ

Ա. Է. ԶԱՄԽԱՆԻ ԱՐԼԻԿԻ \*

Գ. \*

ՄԱՏԹԵՈՍ Ա. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՄԱՀԸ ԵՒ ԳԵՐՈԴ Դ.Ի  
ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ \*).

1865 թուի Օգոստոսի 21-ին գիշերը, որ լուսանալու էր 22, առաւտական 3-րդ ժամին ըստ արեւմտեայց կնքումէ խր մահկանացուն Մատթէոս Ա. Կաստանդնուպօլսեցին եւնոյն ամսի 23-ին պատշաճաւոր յուղարկաւորութեամբ թաղվումէ Ա. Գայիանէի

(\*) Տեղեկութիւնները քաղուած են Սինօդի 10 րդ գործից, որ Մատթէոսի մահուան և Գեորգ Դ.Ի ընտրութեան համար, սկսուած է 1865 թուի Օգոստոսի 23-ին և վերջացած է 1869 թուի Յուլիոսի 23-ին.

վանքի գաւթում։ Այս մասին Սինօդը տեղեկութիւն տալով Կովկասու Փոխարքայի Գլխաւոր կառավարութեանը՝ Օգոստոսի 23-ին որոշումէ շրջաբերական հրամանով յանուն Կոնսիստորների պատուիրել ըստ պատշաճին հոգեհանգիստ կատարել ամենայն եկեղեցիներում՝ նախապէս գումարելով Հայրապետի մահը ժողովրդեան, եւ ժամերգութեանց ժամանակ՝ մինչեւ նոր հայրապետի ընտրութիւնը, յիշել հանգուցեալ Հայրապետի անունը։

Նոյն Օգոստոսի 23 ին Սինօդը ի նկատի ունելով որ անդամոց թիւը լրացնելու համար եղած առաջարկութիւնը Աստրախանի Արքեպիսկոպոս Մատթէոսի եւ Ատրպատականի Արքեպիսկոպոս Գէորգի գեռ վախճանական ելք չէ ստացել — ըստ տրամադրութեան Բարձրագոյն հաստատեալ կարգադրութեան Աշ յօդուածոյ՝ եղած անդամներից աւագագունին՝ Ասլանեան Յովհաննէս Արքեպիսկոպոսին ճանաչումէ պաշտօնակատար Տեղապահի Ատենապետի մինչեւ առաջարկեալների մէկի կամ միւսի հաստատութիւնը, որի մասին եւ տեղեկութիւն է տալիս շրջաբերական հրամանաւ բոլոր կոնսիստորներին եւ Ատրպատականի ու Ասպահանի վիճակաւորներին։

Սինօդը նոյն թուի Սեպտեմբերի 6-ին որոշումէ Հանգուցեալ Կաթողիկոսի մահուան գոյժը առանձին գրութեամբ հազորգել նաեւ Ս. Երուսաղէմայ եւ Կ. Պոլոյ պատրիարքներին եւ Ատրպատականի ու Ասպահանի վիճակաւորներին, Թիֆլիզի գլուխաւոր կառավարութեան միջոցաւ իւրաքանչիւր տէրութեան Դրանը եղած Ռուսաց գեսպանների ձեռքով։ Եշենալ գրութիւններով կաթողիկոսի մահուան գոյժը հաղորդելով՝ Սինօդը առաջարումէ, նախ՝ պատշաճաւոր հոգեհանգիստ կատարել եւ կատարել տակ իւրաքանչիւրը իւր իրաւասրւթեան տակ եղած եկեղեցիներում։

Բ. Էնտրութեան օրը նշանակուած լինելով Ս. Էջմիածնում, 1866 թուի Սեպտեմբերի 15-ին. Կ. Պոլոյ պատրիարքի իրաւասութեան տակ եղած բոլոր վիճակաւոր առաջնորդներին պարտաւորում է, որ իւրաքանչիւրը տեղւոյն քաղաքական ժողովի ձեռքով մի մի աշխարհական պատգամաւոր ընտրեն եւ եթէ իրանք չեն կարողանալ գալ Ս. Էջմիածնի, իրանց կողմէց՝ հանութեամբ տեղւոյն կրօնական ժաղավի մի հոգեւորական պատգամաւորի հետ ուղարկեն Ս. Էջմիածնին նշանակեալ ժամանակին։

Նոյնպէս առաջագրումէ Սինօդը Ա. Երուսաղէմայ Խսայի՛ եւ Կ. Պօլոյ Պօլոս Պատրիարքներին, որ կամ անձամբ կամ իրանց ներկայացուցչի միջոցաւ մասնակցեն ժողովին: Խոկ եթէ անհնար իը լինի անձամբ կամ պատգամաւորով մասնակցել ժողովին՝ գրաւոր յայտնեն իրանց կարծիքը:

Գ. Պատուիրումէ Առապատականի եւ Ասպահանի վիճակաւորներին կաթողիկոսի համար հոգեհանգիստ կատարելուց յետոյ, մի մի ընտրեալ աշխարհական պատգամաւորի հետ կամ անձամբ կամ իրանցից նշանակուած ներկայացուցիչների միջոցաւ մասնակցել ժողովին ի ժամանակին. Խոկ հնդկահայերը թէեւ Ասպահանի վիճակաւորի թէմ են, բայց որովհետեւ օտար տէրութեան հպատակ են, Սինօդը որոշումէ նոցա եւս առանձին գրութիւն ուղարկելով առաջադրելով՝ որ մի աշխարհական պատգամաւոր ընտրեն ժողովին մասնակցելու:

Դ. Որոշումէ այս մասին տեղեկութիւն տալ նաեւ Ռուսաստանի բոլոր վիճակաւորներին, որ նոքա եւս մի մի աշխարհական ընտրեալ պատգամաւորների հետ կամ անձամբ կամ իրանցից նշանակուած մի ներկայացուցչի միջոցաւ մասնակցին ժողովին: Սինօդը Կ. Պօլոյ քաղաքական ժողովին եւս հաղորդումէ կաթուղիկոսի մահուան գոյթը, եւ առաջադրումէ նորան մի աշխարհական պատգամաւոր ընտրել:

Մինչ այս մինչ այն՝ Սինօդից ուղարկուած թղթերը իւր ժամանակին տեղ չը համնելով Կ. Պօլոյ պատրիարքարանը նոյն 1865 թ. Հոկտեմբերի 19 ին յայտնումէ Սինօդին՝ որ չէ ստայել սպասեալ պաշտօնական թուղթը, մինչդեռ կողմնակի ստացուած համրաները ստուգվումեն բարձրագոյն Դրան պաշտօնական ծանուցմամբ. ուստի խնդրումէ տեղեկութիւն Ա. կաթուղիկոսի մահուան հանգամանաց մասին, և լինելիք յաջորդի ընտրութեան համար տնօրէնութեանց մասին: Դրութիւնը վերջանումէ բատ այսմ.

\* Աչ անտեղեակ ինչ իցէ և սրբագումար ժողովոյդ՝ զի Աեղքօնական վարչութիւն Կրօնական և Քաղաքական Ժողովոց Ազգին Հայոց որ ի թագաւորեալ քաղաքն Վաստանդնուազօլիս իրրե ներկայացուցիչ Հայոց ընակելոց ընդ հովանեաւ Օսմանեան տէրութեան, պարտի հարկաւորապէս մասնակցել ի գործ ընտրութեան նորոյ կաթուղիկոսի Մայր Աթոռոյն Հայաստանեայց, Ապա խնդրի ի Սինհոգոսէդ սրբոյ, զի բարեհաճեսցի հաղորդել Ազգային Անդրօնական վարչութեան Կրօնական և

Քաղաքական ժողովոց՝ զսահմանեալն տնօրէնութիւնս, որպէս զի լիցե  
և կենդ. Վարչութեանս զիւր ուրոյն առնել կարգադրութիւնս, որով և  
Եկեղեցիս Հայաստանեայց ունիցի ի ժամանակին զարժանընտիրն իւր  
Հովիւ և Առաջնորդ։ Ի Կոստանդնուպոլիս։ 19 Հոկտեմբերի 1865։

Ստորագրած են։

Կնիք,

Պատրիարք Կ. Պօլոց Պօղոս Արքեպիսկոպոս  
Ատենապետ Ազգային Կրօնական Ժողովոյն Արիս-  
տակէս Եպիսկոպոս։  
Փոխ-Ատենապետ Կրօնական Ժողովոյն Խորէն վար-  
դապետ Գալֆայեան։  
Կնիք ազգային կրօն. ժող. կենդ. վարչութեան։

Սինօդը այս թշութին պատասխանումէ նոյն թուր Գեկոտեմբերի  
17-ին գրած գրութեամբ. որով յայտնելով թէ ի ժամանակին  
ըստ կարգինուղարկել է ծանուցագրեր՝ — մանրամասննկարագր-  
րումէ Հանգուցեալ Հայրապետի հիւանդութեան հանգամանքը,  
որ զանց ենք անում մէջ ըերել։

Մինչ այս մինչ այն՝ Սինօդը ստանալով Կովկասու Փոխարքայից  
աշխարհական պատգամաւորների ընտրութեան համար Կովկա-  
սեան կողմանց նահանգապետների անուան ուղղած շրջաբերա-  
կան հրահանգի պատճէնը երկու հարիւր օրինակ, 1866 թուր Փետրվարի 16-ին որոշման համեմատ, բաժանումէ Կոնոխուոր-  
ներին տեղեկութեան եւ հարկաւոր գէպքում պարտ ու պատ-  
շաճ հրահանգութեան համար։ Աչա այդ հրահանգի պատճէնը։

#### ՊԵՏՃԵՆ

Ի զիսաւոր Կառավարութենէ Փոխարքային Կովկասու ի 29 ն Դեկ-  
1865 ամի № 81, նահանգապետաց յայսկոյս Կովկասեան Կողմանց, Հայոց  
Եկեղեցւոյ, որք ի նոյն կողմանս վասն աշխարհական պատգամաւորաց,  
որք մասնակցին յընտրութիւն ծայրագոյն պատրիարքին Էջմիածնի։

Կարգադրութեամբ վասն Կառավարութեան գործոց  
Քրիստոնէից Լուսաւորչական Հայոց դաւանութեան (Հատոր XI մասն  
1 զլուխ 2 յօդուահք 917 և 919), սահմանեալ է զի յընտրութիւն  
Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց մասնակցին ամենոյն անգամք  
Լուսաւորչական Հայոց Սիւնչոգոսին Էջմիածնի և եօթն երիցագոյն  
Եպիսկոպոսունք, որք յայնժամ դտանիցին յէջմիածնին (ի զիսուածա  
պակասութեան Եպիսկոպոսաց, զայն թիւ ընուն երիցագոյն վարդապետք  
տեղւոյն)։ Վիճակաւոր Առաջնորդք կամ այնոքիկ, զորս նշանակեն նո-  
քա ի Հոգեորականաց, և բաց յայսմանէ աշխարհական պատգամա-  
ւորք, ընարեալք մի մի յիւրաքանչիւր թեմից։

Աասն ընտրութեան աշխարհական պատգամաւորաց ի նոյն իսկ կարգագրութեան (յօդուած 917) սահմանեալ է, զի նոքա ընտրին յամենայն Մելիքաց, և զբաշեաց և պյլոց պատուաւոր աշխարհական անդամոց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ, որոց են իրաւունք ընտրութեան ըստ վաղեմնի ծիսի այսր Եկեղեցւոյ, Աւնելով ի նկատման զառաջիկայ ընտրութիւն ծայրագոյն Պատրիարքին Էջմիածնի և ցանկալով տալ Կովկասեան յայսկոյս սահմանի Հայոց ժողովրդեան ըստ ամենայնի կանոնաւոր և համաձայն օրինաց միջոցս ընտրութեան աշխարհական պատգամաւորաց, որք ունին զիրաւունս մասնակցիլ յայսմ վսեմ գործ և առ ի զառաջս առնուլ այնոցիկ զանցառութեանց ի կարգէ, որք եղեն ի նախկին ընտրութիւնն, ես հարկաւոր համարիմ սահմանել ի ձեռնարկութիւն զհետևեալ կանոնս:

1) Եւրաբանչիւր վիճակաւոր Լուսաւորչեան Հայոց թեմի յայսկոյս Կովկասեան սահմանի յընդունիլ յիւրում ի Սինօդէն Էջմիածնի ղհրաման յաղագս յառաջիկայ ընտրութեան Պատրիարքին ամենայն Հայոց, ծանուցանէ զայնմանէ նահանգապետին իւրում՝ թեմի՝ վասն առնելոյ զարժանին տնօրէնութիւն ի մասին ընտրութեան ի նոյն վիճակէ աշխարհական պատգամաւորի, որ պարտի մասնակից լինել յընտրութիւն Պատրիարքին ամենայն Հայոց:

2), Վիճակաւոր առաջնորդն ի ծանուցագրի իւրում, հիմնեալ ի վերայ բաժանման վիճակին, որ նշակեալ է ի Կարգագրութեան յաղագս Կառավարութեան Հոգեոր գործոց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ (Հատոր XI մասն I զլուխ 4 յօդ. 962, 963, 964, և 965,) պարտի ցուցանել զայնոսիկ գաւառս և գաւառակս (ուեղդ և ուչաստոկ), յորս սահմանեալ են Հոգեոր Կառավարութիւնն և գործակատարութիւնն (բլլաղոցինիա) եւ յորս անդամք Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ըստ վաղեմնի ծիսի այսր Եկեղեցւոյ ունին իրաւունս մասնակից լինել յընտրութիւն աշխարհական պատգամաւորի, պարտաւորին ընտրել ի միջոյ իւրեանց զերեսփոխանս:

3), ի ստանալն զայսպիսի ծանուցագիր ի վիճակային իշխանութենէ, նահանգապետն առնէ զարժանին տնօրէնութիւն վասն յայտնելոյ ի ձեռն գաւառապետաց յիշեալ անդամոց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ի բնակչաց այնոցիկ տեղեաց, որք ստորագրեալ են Հոգեոր Կառավարութեան կամ անընդմիջաբար վիճակային իշխանութեան ստորագրեալ գործակատարութեանց, որպէս զի նոքա ցնշանակեալ ժամանակակետն ընտրեսցեն զերկու երկու երեսփոխանս, որք ի նշանակեալ ժամանակի պարտին գտանիլ ի գլխաւոր քաղաքի այնր վիճակի, որում նոքա պատկանին և ի միասին ընդ երեսփոխանաց այնր քաղաքի ընտրեն զմի պատգամաւոր յայնր վիճակէ:

Ծանոթութիւն. Թէե գործակատարութիւն Քութայիսոյ անընդմիջաբար չէ ստորագրեալ վիճակային իշխանութեան, բայց որովհետեւ

Լուսաւորչական Հայոց եկեղեցիք Խմերեթիոյ և Գուրիոյ կազմեն զմասն վիճակին մ.րաստանի, ուստի ի բնակչաց գործակատարութեան Քութայիսոյ նշանակին նմանապէս երկու երեսփոխանք:

4), Ի կոչումն երեսփոխանաց կարեն նշանակիլ անձինք՝ որպէս ի թուոյ տեղական ընտրողաց նմանապէս և ի բնակչաց թեմական քաղաքի, որք ունին իրաւունս մասնակցել յընտրութիւնս Ընտրեալ երեսփոխանք ի տեղական բնակչաց ի դեպս անհնարութեան ուղերելոյ ի թեմական քաղաքն, կարող են տալ այլում զիրաւունս ի բեռնց ըստ հաւատարմագրաց:

5), Վ.ասն ընտրելոյ զերեսփոխանս գլխաւոր քաղաքի վիճակին, իւրաքանչիւր վիճակաւոր Առաջնորդ ըստ համաձայնութեան նահանգապետին հրամանագրէ Աւագ քահանայից բոլոր եկեղեցեաց պյնիք քաղաքի, յորում նա բնակի, զի նոքա յառաջիկայ կիւրակէի յեկեղեցիս ծանուցմամբ հրաւիրեսցեն զանձինս, որք ունին ըստ վաղեմնի ծիսի Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ՝ զիրաւունս մասնակցիլ յընտրութիւն աշխարհական պատգամաւորի, ընտրել ի միջոյ իւրեանց զերեսփոխանս վասն ընտրելոյ զպատգամաւոր, որ պարտաւորէ մասնակից լինիլ յընտրութիւն Պատրիարքի ամենայն Հայոց ընտրութիւն այսոցիկ երեսփոխանաց լինի հետեւեալ կարգաւ:

6), Փողովրդականք իւրաքանչիւր եկեղեցւոյ, որք ըստ վաղեմնի ծիսի Հայոց եկեղեցւոյ, ունին իրաւունս մասնակցից լինելոյ յընտրութիւն պատգամաւորի, ընտրեն ի միջոյ իւրեանց զերիս երեսփոխանս:

7), Ըետ ընտրութեան երեսփոխանաց պարտի լինիլ կամ ի նոյն իսկ եկեղեցւոյ յայնժամ, երբ ոչ կատարի ժամերգութիւն կամ ի գաւթի նորանա պարտի վերջանալ յընթացս ութ աւուրց յօրէ ծանուցման:

8), Յետ ընտրութեան երեսփոխանաց, կազմի ընտրողական թերթ, յորում պարտի նշանակել անուն և տոհմանուն ընտրեալ երեսփոխանաց և ստորագրութիւնք ընտրողաց:

9), Ի վախճան ընտրութեան երեսփոխանաց, աւագ քահանայք ներկայացուցանեն զընտրողական թերթս վիճակաւոր առաջնորդաց իւրեանց, որք ըստ կարգի իւրեանց հասուցանեն զայնս նահանգապետաց, իսկ ուր չգտանին այնոքիք՝ գաւառապետաց:

6), Ըստ նախընթաց համաձայնութեան նահանգապետին կամ դաւառապետին՝ նշանակի ժամանակ և տեղի ժողովելոյ երեսփոխանաց ի գլխաւոր քաղաքի վիճակին,

7), Ի նշանակեալ ժամանակի բոլոր ընտրեալ երեսփոխանք ժողովին ի նշանակեալ տեղւոց, վասն ընտրելոյ զպատգամաւոր ի թեմէ, Ժողովն համարի կատարեալ, երբ երկու մասն յերից երեսփոխանաց լինին ներկայ, համարելով ի նոյն թիւ և զայնոսիկ, որք ունին զհաւատարմագիր:

8), Երեսփոխանք առաջարկեն զկանդիտատս ի կոչումն պատգամա-

ւորի քուեարկութեամբ, բայց ոչ պյլապէս, եթէ ոչ համաձայնութեամբ քուեարկելեաց:

9). Զկնի քուեարկութեան, նա, որոյ կողմն լինի մեծագոյն մասն ձայնից, նշանակի պատգամաւոր այնը վիճակի, յորում եղե ընտրութիւն։ Խօկնա, որ ընդունի զկնի նորա զառաւելագոյն ձայն, նշանակի կանդիտատ վասն կատարելոյ զպաշաօն պատգամաւորի ի դէպս մահուան կամ հիւանդութեան նորին։

10). Ի ժողովի երեսփոխանաց, ի ժամանակի ընտրութեան պատգամաւորի, ներկայ գտանի աստիճանաւոր, նշանակեալ ի կառավարութենէ վասն պահպանութեան կարգին։

11). Ընտրեալ ամենայն վիճակաց աշխարհական պատգամաւորք պարտին ի նշանակեալ ժամանակի ուղեորել ի վանս Էջմիածնի վասն մասնակից լինելոյ յընտրութեան Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց։

12). Այսորիկ պատգամաւորք ի դէպս անհնարութեան ներկայ գտանելոյ ի վանս Էջմիածնի ի նախանշանակեալ ժամանակակէտի վասն ընտրութեան Պատրիարքին, ունին ըստ օրինաց զիրաւունս զրաւորաբար յայտնել զիւր կարծիս, հասուցանելով զայն ի վանս Էջմիածնի։

Ստորագրեաց. Փորիսարքայ Կովկասեան

Գեներալ Ֆելզցենմէիստր Միքայէլ.

Վաւերացոյց. Կառավարիչ զլխաւոր Կառավարութեան Սենատոր, Ստատս—Սեկրետար Բարոն

Ա. Նիկոլաի։

Դերեկտոր, Ա. Բարանովսկի։

Կ. Պօլոյ Պատրիարքարանից ընտրութեան մասնակցութեան համար իւր՝ 1865 թուի Սեպտեմբերի 11 գրութեան պատասխան ըրտանալով Սինօդը, 1866 թուի Մայիսի 21-ին պատրիարքի անուան ուղղած գրութեամբ յայտնում է իւր տժգոհութիւնը այն տարապարհակ վարմանց մասին՝ որին հետեւումէին կ. Պօլուցցիք: Սինօդը գրումէ Պատրիարքին. «Մինչ այս մինչ այն՝ լուրք տարաձայնութեանց ոմանց ի հայազգի հասարակութենէ քաղաքիդ և իւրնգիրք յարուցեալք անտեղաբար առ ի փոխարկել զկանոնադրութիւն 1836 ամի, որ յաղագս վարչութեան գործոց Հայաստանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան յառաջ քան զընտրութիւն նորոյ Կաթուղիկոսի իրբե հակառակ կանոնաց եկեղեցւոյն և մանաւանդ Կաթուղիկոսական իրաւանց, և գրութիւնք ըստ այսմ յաճախեալք ի տեղիս տեղիս՝ (զորոյ զմիոյն զպատճէնն հարկ համարիմք առաքել ահա առ Սրբազնութիւն ձեր) վշտացուցանեն ապաքէն զողջամիտսն աղջիս, մանաւանդ զուխտ միաբանութեան Աթոռոցս։

Այլ թէ վասն էր առաջարկութիւն խնդրոյն համարի անտեղի և տարագէպ, պարտ համարիմք բացատրել աստեն համաօտիւ առ լուսաւոր զիտութիւն բարձու Արբազնութեան Զերշ և համայն Հայաղնեայց հասարակութեան կողմանցգ։

Այս հարցը Ախողը ինքն տալուց յետոյ, ինքն եւս սկսումէ պատասխանել յայտնելով որ, բարբարոսների տիրապետութեան ժամանակ բոլոր կարգ եւ կանոնները խանգարուած էին. եղմիածնի վարչութիւնը հեծումէր ծանր ծանր պարագերի եւ վշտաց ենթարկուելով. իսկ ներքին եւ արտաքին անկարգութեանց եւ զրկանաց առաջքը առնուեց Ռուսաց բարեինամ Կառավարութեան 1836 թուի հաստատած կանոնագրութեամբ, որ ինչպէս գրումէ Ախողը «իբրև հրահանգ ուղիղ անսայթաք գործավարութեան հոգեոր տեսչութեան՝ ձեռնտու գտաւ աթոռշն վերականգնել ի խաթարեալ զրութենէ անտի» Նա կանոնաւորէ զշափ, զսահման իրաւանց և գործոց անձնիւր հոգեոր տեսչութեան Հայոց պաշտօնակալ անձանց. Այլ ոչ բնաւ գնէ խափան, որպէս կարծեն ոմանք ընդ էութիւն իրաւանց և արտօնութեանց Կաթուղիկոսաց՝ եթէ զիտիցեն նոքա վարել զգաւազան հայրապետական իշխանութեան իրեանց իրաւամբը և արդարութեամբը, և ոչ դոյզն ինչ զրծէ անկախութեան եկեղեցւոյն, այլ ազատ ըստ ամենայնի պաշտէ անվթար զնախնաւանդ էսս արարողութեանց իւրոց։

Թերութիւնքն ինչ, որ թեականարար գրեթէ կցորդ են ընդ նորահաստատ և անփորձ ձեռնարկութեանց ի վեր երեւեալք և ի կանոնագրութեան անդ՝ վերաբերին միայն արտաքին իրողութեանց հոգեոր տեսչութեան և քաղաքական իրաւանց կղերաց եկեղեցւոյն և ոչ բնաւ կրօնական մասին. օրինակի աղագաւ բողոք ընդ ակնարկութիւն Կալկաթարնակ Հայոց ընդ գէմ յօգուածոց ինչ՝ որ յաղագս ստացուածոց և գոյից կուսակրօն հոգեորականաց և ժառանգական իրաւանց նոցա առ այնու։

Ի վերայ այսր ամենայնի՝ և քանզի ամենայն կարգ և օրէնք ենթագրին փոփոխութեան ընդ յեղափոխութեանց և պայմանաց ժամանակին, ուստի և պետութիւն Ռուսիոյ ըստ մեծի շնորհաց և խնամոց իւրոց առ Ազգն և առ Եկեղեցին Հայոց, ոչ ինչ զլացաւ և զայն իրաւունս՝ զի կաթուղիկոսունք ազգիս կարիցեն բերել յուղութիւն և ի լրութիւն այնոցիկ թերութեանց՝ որք հակառակ կացին բնազիր կանոնաց և աւանդութեանց եկեղեցւոյն մերոյ. բայց թէ անփոյթ գտան նոքա ցայս վայր ժամանակ զայնու կարեոր իրօք զամն աւելի քան ըդքսան, ո՛ զատի ի նմին յանցաւոր։

Յետ այսր ամենայնի՝ զի՞նչ այլ ևս կէտ նպատակի ինդրայոյզ արանցդ այդոցունց, որք փոփոխութեան կանոնագրութեան ցանկան. և

զի՞նչ յարաբերութիւն ընդ մէջ գործոյն ընտրութեան կաթուղիկոսի և ընդ մէջ փոփոխութեան կանոնագրութեան մինչդեռ երկու իրք տարրերը յիրերաց և ի մի և նոյն ժամանակի իրաւասութեան նոյն իսկ կաթուղիկոսաց ենթակայ: — Սինօղս գժուարանայ գիտել այլ որպէս զօրէ իմաստասիրել թուի իմն լինել զրգիռ թելազրութեան օտարութիւ աղջեցութեանց և հայթայթանք ոմանց յազգայնոց մերօց, ըստ մեծի մասին յերիտասարդաց ամբաստանօրէն զինուորելոց ընդ դէմ բարեաց Ամռոռոյս և պետութեան Առուսիոյ, յորս կացին և վայեկեցին նոքա, և այն՝ անտարակոյս ակնկալութեամբ անձնական օգտի»:

«Հաւատալ և հիտեւել բանից նոցաւ որոց շատացեալ թիւր և թոյլ հարեւանցի իմն ծանօթութեամբք զարտաքին միայն կառավարութեանէ մերմէ: անգիտակք են բնաւ հանգամանաց նիրքին զրութեան Ամռոռոյս զյարաբերութեանէ և զինամոց Տէրութեան առ նա: կարէ սերմանել զգժութիւն ի հեռաբնակ հայազգիս մեր, վշտացուցանել զեռանկուն զգացմունս բարեմիտ հասարակութեան առ Ամռոռն: նուազեցուցանել զշնորհս իննամոց տէրութեան և յապազիլ թերեւս գործ ընտրութեան կաթուղիկոսի յանգարմանելի կորուստ բարեաց Ամռոռոյս և ի կարի վնաս եկեղեցական վարչութեան մերոյ առ հասարակ»:

«Եսկ պառակտել զհամազգայինս մեր զիանք մտարերեցին յայն և՛ ոմանք փոխազրութեամբ կաթուղիկոսական գահին ի Սիս, նշանակէ խախտել բնաւ զբարոյական շաղկապ Ազգին, որ ի սփիւռս աշխարհաց, կապտել զգարաւոր փառս յԱմռոռոյս Սրբոյ Էջմիածնի, որ է միակ ապաստանարան յուսոյ ազգիս և տեղի պարծանաց նորա»:

«Ըստ այսմ անտարակոյս եմք Սրբազան Տէր, զի յայգք Խնդրոյն առաջի ողջամտաց ազգիս, գատեսցի բնաւին անտեղի և տարապայման: և ինքեւանք իսկ ինքրայսզք հասու լեալ խորին կըուգատութեամբ և հեռատես զգուշութեամբ բանից մերոց՝ շրջեսցին ի նոյն, զօգեալք, չորդեալք ընդ մեզ միախորհուրդ սիրով համակրութեան առ ի շահ լուսութեան ազգիս և Ամռոռոյս միանգամայն»:

«Այսու բարեմիտ զգացմամբք Սինօղն Սրբոյ Էջմիածնի վերստին հրաւիրէ զՁեզ, Գերապատիւ Տէր, զի Դուք իրեն նախանձաւոր փառաց և հաստատութեան Հայրապետական դահիս՝ փոյթ ի մէջ առնուցուք ամենաշնարաւոր միջոցքը խափան դնել շարեացն, որ կարէ սպասնալ Ամռոռոյն և ազգին յերկպառակին ի ներհակամիտ կարծիս՝ յայսմ համազգային իրի շրջելով զուշ նպատակի համայն հայազնէից մերոց, որք ընդ Զերով տեսչութեամբ ի միաբանութիւն սիրոյ, և ի մտազիւր և միակամընտրութիւն նորոյ հայրապետի, նոյն իսկ կարգաւ՝ որպէս բացատրեալ է ի յիշատակեալ առաջարկութեան Սինօղիս առ Ձեզ և առ Անգրօնական Ազգային վարչութիւն: վասն զի ի գալ հասանիլ պյոր համայն պատգամաւորաց ի հեռաւոր վայրաց ըստ ժամագրութեանն, ընտրութիւն կաթուղիկոսի ունի կոյցանալ անմիջապէս և առանց յետաձգու-

թեան, որ յայնժամ համարիցի յանկարելեաց սակի, և անձն ընտրեալ բազմութեամբ ներկայ պատգամաւորաց ծանիցի ըստ օրինի ընդհանուր կաթուղիկոս ազգիս, և զայնմանէ, զոր ինչ հաճեսցի Սրբազնութիւն 2եր տնօրինել ըստ այսմ կարեռագոյն իրի, շնորհ արասցէ ծանօթս տալ Սինօգիս կարի փութով. հանգերձ հանգամանապատում՝ բացատրութեամբ պարագայիցն՝ գծագրելոց ի պատճենի նամակին՝ որ զոյդ ընդ սմին առաքի ։

Սինօդը իւր այդ գրութեան ի պատասխանի գլխաւոր կառավարութեան 1866 թուի 0գոստոսի 9ին գրութեան հետ ստանումէ Կ. Պօլսոյ պատրիարքի գրութիւնը՝ նոյն թուի Յունիսի 15ին, եւ կաթուղիկոսական խնդրի ու պօլօժենիայի վերաբննութեան համար կազմած յանձնաժողովի ծրագիրը: Սինօդը պարտաւորվումէ չընդունել նախ՝ յանձնաժողովի պաշտօնական չինիլը, որովհետեւ նորանշանակութիւնը յայտնի չէր թէ ինչ միջոցաւ էր եղել. Բ. Սինօդը պարտաւորվումէ չընդունել այդ ժողովի որոշումը, չունենալով երաշխաւորութիւն թէ արդեօք այդ ժողովը կարող է բոլոր տաճկահայոց ցանկութեանց թարգման հանգիստանալ, մանաւանդ որ դադարած լինելով Սահմանադրութիւնը, վերաբննութիւնն ու որպիսի ընդունելութեան արժանացած լինելը տարակուսական էր: Աւստի Սինօդը պարտաւորվումէր այդ մասնաժողովի եղբակացութիւնը համարել մի վիճաբանական աշխատութիւն՝ որ պաշտօնական գործոց մէջ չէր կարող կշիռ ունենալ: Գ. Սինօդը պարտաւորվումէր յընդունել յանձնաժողովի եղբակացութիւնը պօլօժենիայի մասին, որովհետեւ պօլօժենիան կազմելով Ռուսաց տէրութեան օրէնքների մի մասը, սահմանեալ կարգով կարող էր ենթարկուել վերապննութեան եւ փոփոխութեան՝ ինչպէս լինումեն առ հասարակ օրինաց փոփոխութիւնները: Եւ որովհետեւ Պօլօժենիան Խնամանացայոց համար է, հետեւաբար եւ օտարերկրեայ անձանց քննադատութիւնները չէին կարող կշիռ ունենալ. միայն Ռուսաց կառավարութիւնը, որ 1836 թուին հաստատել էր Պօլօժենիան, իրաւունք ունէր փոփոխութիւններներմուծել նորա մէջ: Վերջադէս Սինօդը չընդունելով այդ ծրագիրը, պարտաւորվումէր ըստ առաջնորդութիւնն համարելով տաճկահայոց համար միայն 45 առաջնորդութիւն՝ ընդունել 90 ձայն պատգամաւորների, որովհետեւ յայտնի չէին պատճառները թէ 45 առաջնորդութիւնները ինչպէս 65 դարձան. եւ 20 առաջնորդութիւնները ինչպէս աւելացան:

Մինչ այս մինչ այն՝ Կ. Պօլսոյ Պատրիարքարանը 1866 թուի 0գոստոսի 26ին ընդ ստորագրութեամբ եւ կնքով Կ. Պօլսոյ Պատրիարք Պօղոս Սրբեպիսկոպոսի, ստորագրութեամբ Սոյ միաբանութեան փոխանորդ Վարժապետեան Ներսէս Եպիսկոպոսի, Աղթամարայ միաբանութեան փոխանորդ Աէթեան Յովհաննէս Վարդապետի, Ս. Երուսաղէմայ փոխանորդ Աէֆէրեան Յիմէօն Վարդապետի եւ Տաճկաստանի Հայոց Երեսփոխանական ընդհանուր ժողովի առենապետ գնոտապետ Բարունակ Յէրուշեանի՝ գրումէ հետեւեալը.

«Գերապատիւ Խորհրդական Անդամք Սինօգին Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի».

«Արպէս զրեցաւ ի մէնջ առ Սրբազան Սինօդդի ի 15 Յուլիսի անցելոյ ընդ 164 համարաւ, խնդիր ընտրութեան Յաջորդի ընդհանրանկան Հայրապետի Մայր Աթոռոյդ Սրբոյ առաջի եղաւ ազգային ընդհանուր ժողովոյ մայրաքաղաքիս, որ կազմեալ ժողով յեկեղեցական և աշխարհական երեսփոխանաց ազգիս ընդ մերով նախագահութեամբ զազդն ողջոյն զթուրքիարնակ՝ առաջի Օսմանեան պետութեան և առաջի ազգին ներկայացուցանէ. և ըստ տրամադրութեան մերս ազգային սահմանադրութեան ձեռնհաս է տնօրինել զիրաւունս մասնակցութեան Թուրքիարնակ Հայոց յընտրութիւն ամենայն Հայոց կաթուղիկոսին».

«Ազգային արգի ընդհանուր ժողովս Հասու եղեւ կարգադրութեան Սրբոյ Սինօգիդ, այն է խնդրել ի Պատրիարքէն Կ. Պօլսոյ զի Հանդերձ կրօնական ժողովով նշանակեսցէ զմի ոք եկեղեցական պատգամաւոր, և ի քաղաքական ժողովոյ զի և նա որշեսցէ զմի ոք աշխարհական պատգամաւոր վասն Կ. Պօլսոյ, և հրաւիրեսցէ զամենայն առաջնորդական վիճակայինս Թուրքիոյ ընտրել իւրաքանչիւր ի նոցունց կրկին պատգամաւորս՝ յորոց մին եկեղեցական ի զիմաց առաջնորդի, և մին աշխարհական՝ ի զիմաց ժողովրդեան և այսու ամենեքին մասնակից լիցին պատգամաւորօք և կամ նամակաւ ընտրութեան կաթուղիկոսին ամենայն Հայոց, որ Հանդերձեալ է կատարել ի 15—17 Սեպտեմբերի այսր ամի ի Միածնաէջ Ս. Տաճարին. Եւ տեսեալ զի ընտրական կարգադրութիւնս այս, որ թերեւ Համաձայն կանոնադրութեան եկեղեցական վարչութեան մերազնէից Առուսաստանեայց, այլ ոչ ի զէպ գայ բնաւին թուրքիարնակ Հայկազանցս քաղաքական վիճակի պարագայից, որք պահանջին «միայն ի ձեռն պաշտօնական գլխոյ Ազգին՝ այն է Պատրիարքին Կ. Պօլսոյ զի Հայկազանցս ատարաբնակս յարաբերութիւնս ընդ Համայն Համազիս օտարաբնակս» և նկատելով իսկ զի Ս. Սինօգն զհրաւիրազիրս իւր ի խնդիր պատգամաւորացն պահանջելոց ի

մերազննեայ վիճակայնոց թուրքիոյ՝ ոչ առ վիճակայինս ուղղակի, այլ առ կեզրոնական վարչութիւնն ի Կ. Պօլիս ուղղեալ՝ ակն յայտնի յերեան ածէր զիւրին քաղաքագիտական խոհականութիւն ի պատճառս փափուկ դրից քաղաքական վիճակի թուրքիաբնակ հայկազանցոց, վասն որոյ Աղգային ընդհանուր ժողովն սահմանեաց զմասնակցութիւն թուրքիաբնակ Հայոցս յընտրութիւն ամենայն Հայոց Հայրապետին՝ առնել ոչ ի վիճակաւորացն և ի ժողովրդականացն պատգամաւորս և կամ քուեայս առանձինս ինզրելով ըստ պատուիրանաց Ա. Սինօդիդ, որ նոր իմն է եղանակ ընտրութեան և ոչ երբէք ի գործ եղեալ աստանօր ի մէջ մեր, և ոչ զազգն ողջոյն յերիս բաժանեալ՝ միայն զմեմականս Ա. Եջմիածնի ընդունել ի մասնակցութիւն ընտրութեան, որպէս անուշագրութեամբ եղեալն է յընտրութեան հանդուցելոյ Հայրապետին, վտարելով արտաք զմեմականս Կիլիկիոյ և Աղմամարայ մասնաւոր կաթուղիկոսութեանց, որպէս թէ չիցեն և նոքա որդիք Հայաստանեալոյ Կաթուղիկէ Առաքելական եկեղեցւոյ և կամ թէ ընտրելի կաթուղիկոսն չիցէ կաթուղիկոս ամենայն Հայոց, որ ընդ տիեղերս իցեն: Ա. Աղմամօրէն Տաճկաստանի և Դանուբեան աշխարհաց հայ որեարն ընդունել ի մասնակցութիւն ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց: ըստ կարգաց վաղնջուց և օրինակ Հայաստանեայցո Մի, Սուրբ, Կաթուղիկէ և Առաքելական Եկեղեցւոյ:

«Եւ արդ ըստ սահմանելոյ Աղգային Երեսփսիսական ընդհանուր ժողովոյ՝ գումարեցաւ վիճակային եկեղեցական ժողով յերկոտասաներորդումն Յուլիսի Ամեռուանիստ Մայրեկեղեցւոջ Կ. Պօլսոյ ընդ մերով գահերեցութեամբ, ուր բաց յեպիսկոպոսաց գտելոց ի մայրաքաղաքիս և ի քարոզիչ վարդապետաց և յաւագ և յաթոռակալ քահանայից ամենայն եկեղեցեաց Կ. Պօլսոյ՝ ներկայ գտան նաև յատուկ հրաւիրմամբ մերձակայ վիճակաւոր Արքեպիսկոպոսունք և Ա. Անտչարք Ա. ուխտին Գլակայ և Արմաշու հոչակաւոր վանուցն և Կիլիկիոյ և Աղմամարայ և Ա. Երսւասաղէմի Ամռոոց, յայս սակս կարգեալ փոխանորդք բարձրաստիճան եկեղեցականք: Կ ժողովի աստ նախ պատրաստեցաւ ցուցակ ամենայն եպիսկոպոսաց Հայաստանեայց եկեղեցւոյ առանց խտրութեան երկրի և պաշտամնն և այլ հանդամնաց, որոց թիւն եշաս ի յիսուն. և ի յիսնիցն անդէն ի ժողովի անդ որոշեցան եօթնեքին արժանաւորագոյնք ի գահակալութիւն Արարատեան գերագահ Ամռոոյն, այս ցաւցակ եօթն անուանց ստորագրեալ ի հարց ժողովականաց՝ ներկայացաւ Աղգային Երեսփսիսական ընդհանուր ժողովոյ, որ ի քսաներորդ երկրորդ նմին ամսոյ գումարեալ ի տաճարին Սրբուհւոյ Աստուածամօր մայրաքաղաքիս ընդ մերով գահերեցութեամբ և գործակցութեամբ ներկայացուցաց կաթուղիկասական Ամռոոյն Կիլիկիոյ և Աղմամարայ և պատրիարքական Ամռոոյն Ա. Երուսաղէմի, զիօթն ընտրելեացն զցուցակ ըստ ատենական կարգաց և

կանոնաց՝ գաղտնի քուէարկութեամբ վերածեաց յերիս ընտրելիս, յոր առաջինն է և զլիաւոր նախկին Պատրիարք Կ. Պօլսոյ Ամենապատիւ տիւ Տ. Գէորգ Ս. Արքեպիսկոպոս Պրուսայու, զինի նորա Ամենապատիւ Տ. Եսայի Ս. Արքեպիսկոպոս Պատրիարք Ա. Երուսաղէմի, և յետ նորա Վերապատիւ Տ. Եգնատիոս Ս. Արքեպիսկոպոս Ա. ասպուրականի Սորա ևն երկք ընտրելիք կաթուղիկոսական գահուն Մօր լուսոյ Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի ի դիմաց Հանուրց Հայաստանեայց ընակելոց ի Թուրքիա. և մեր Ներկայացուցեալ զանուանսդ առ Ս. Սինօդդ և առ ամենայն Հայոց կաթուղիկոսութեան ընտրողական համազգային բարձր ժողովդ՝ յանուն ընդհանուր ժողովոյ կեղրոնական վարչութեան Աղդիս, ի պաշտօնէ ազդ առնեմք՝ թէ իւրաքանչիւր ի սոցանէ ունին իրաւունս կրկնաթիւ քուէից վաթուն և հինգ առաջնորդական վիճակաց Հայոցս Տաճկաստանի յառաջին անդ ընտրողական գործողութեան՝ որ ունի կատարել ի Մայր Տաճարի Սրբոյ Էջմիածնի ի Հնգետասաներորդն առաջիկայ Սեպտեմբեր ամսեան, որպէս յայտ արարեալ է զիր սրբոյ Սինօդիդ:

« Եսկ յերկրորդ գործողութեան ընտրական քուէարկութեան՝ որ առ ի վերջնական և վճռական ընտրութիւն ի միջոյ չորեցունց ստացելոցն առաւելագոյն քուեայս պարտի կատարել ի համազգային ընտրողական բարձր ժողովի, պատգամաւ որքն Հայոց Թուրքաստանեայց ունին հրահանգ յընդհանուր ժողովոյ մերմէ թէ ո՞ւմ պարտին տալ զքուեայս ի միջոյ երից անտի ընտրելեաց, ունելով յայս նուագ ևս իւրաքանչիւր պատգամաւոր վաթուն և հինգ ձայնից զօրութիւն, և իւրաքանչիւր միահաղոյն հարիւր երեսուն քուեայս » :

« Ոչ տարագէպ թուի մեզ աստանօր մեկնաբանել զտարբերութիւն վերդնշանակեալ թուոյ առաջնորդական վիճակաց Թուրքիաբնակ Հայոցս ի թուոյն ցուցելոյ յազգային կեղրոնական վարչութենէս ի մասնակցութեան մերում յընտրութիւն նախորդ Քահանայապետիւ Այս տարբերութիւն որպէս տեսանի ի ցուցակէն, որ ի ձեռս պատգամաւորաց մերոց, ծագի յայնմանէ, զի ի ժամանակի նախընթաց կաթուղիկոսական ընտրութեան՝ Ազգային կեղրոնական վարչութիւն տեղեւոյս՝ ոչ էր առեալ ի զիր զթեմն կաթուղիկոսութեանց Կիլիկիոյ և Աղթամարայ և ոչ զվիճակս պատրիարքութեան Ս. Երուսաղէմայ՝ զոր ի վեր անդր ասացաք. զորոց զմանակցութիւն յայս համազգային ընտրական գործողութեան սահմանեաց արգի երեսփոխանական ընդհանուր վարչութիւն Թուրքիաբնակ Հայոց » :

« Ազգային ընդհանուր ժողովս քաջ համոզեալ է, զի յետ օրինաւորապէս և ըստ ատենական կարգաց կատարման առաջին և երկրորդ քուէարկութեանց յընտրութիւն կաթուղիկոսին ամենայն Հայոց ի Մայր Տաճարին՝ ներկայութեամբ և գործակցութեամբ մերս պատգամաւորացս, եկեղեցականն այն բարձրաստիճան՝ որ առաւել քան զա-

մենեին ընկալեցու քուեայս, նա ամբառնայ արժանաւորութեամբ  
ի գերագահ Աթոռ Սրբազն Առաքելոցն Թաղէի և Քարդուղիմեայ և  
առաքելանման Առնն Աստուծոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ,  
ըստ իրաւանց և արդարութեան և ըստ օրինաց ազգոյին Սուրբ Եկեղեցւոյս մերոյ: Եւ յայնժամ աթոռք մասնաւոր կաթուղիկոսութեանց  
Կիլիկիոյ և Աղթամարայ պատրիարքութեանց Կ. Պօլսոյ և Ս. Երուսա-  
ղէմի, և ամենայն վիճակաւորք Տաճկաստանի մասնակցեալք յընտրու-  
թիւն Հայրապետին ամենայն Հայոց՝ իրաւամբ որդիս գաւանին զան-  
ձինս ընտրելոյն յամենայն Հայոց, որ և իրաւամբ կրէ զբարձր տիտղոս  
Գերագահ Կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ իրք արդար և զինոյ միոյ  
միայնոյ Կաթուղիկէ և Առաքելական Հայաստանեայց ուղղափառ Ս.  
Եկեղեցւոյ զոր պանծացուոցէ . . . .

Սրտատպելով այս գրութիւնը այլեւո ոչինչ չէ մնում ասել.  
Ժող իրանք ընթերցողները հետեւցնեն ինչ որ Հարկաւոր է. մի-  
այն հարկ ենք համարում յիշել, որ Կ. Պօլսոյ պատրիարքարա-  
նը եւ Աղթային երեսփոխանական ժողովը բոլոր Տաճկահայոց  
առաջնորդութեանց ներկայացուցիչ հանդիսանալով՝ նոցա իրա-  
ւունքը ինքն է ստանձնում; եւ նախկին ընտրութեանց ժամանակ  
որ անտես էին առնուած Սսի, Աղթամարայ կաթուղիկոսական  
թեմերը, Երուսաղէմի պատրիարքական թեմը եւ Գանուբեան  
գաւառները, այժմ ի հաշիւ են մտնում:

Հարկ եմ համարում դնել այստեղ ընդօրինակութիւնը «Պատ-  
կեր առաջնորդութեանց Թուրքիաբնակ Հայոց գրուածքի», որ է.

Ա.

### ԹԵՄ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ Ս. ԷՇՄԻԱՆԻՆԻ.

Ա. ՊԱՏՐԻԱՐքութիւն Կ. ՊՕԼՍՈՑ.

- |   |                          |
|---|--------------------------|
| 1. Կոստանդնուպօլիս.                         | 12. Սեբաստիա.            |
| 2. Թէքիրդաղ.                                | 13. Կարին.               |
| 3. Աղրիանուպօլիս.                           | 14. Վան.                 |
| 4. Վառնայ.                                  | 15. Լիմ և Կտուց անապատք. |
| 5. Գանուբեան իշխանութիւնք<br>(Մօլովալաքիա). | 16. Բասէն.               |
| 6. Տրապիզոն.                                | 17. Պայազիս.             |
| 7. Ճանիկ.                                   | 18. Կարս.                |
| 8. Ճապըն—Պարահիսար.                         | 19. Մուշ.                |
| 9. Թամզարայ և Ածպըտեր.                      | 20. Գղի.                 |
| 10. Ամասիա և Մարզուան.                      | 21. Բաղէշ.               |
| 11. Եւղոկիա.                                | 22. Գերճան.              |
|   | 23. Բաբերդ.              |

24. Երզնկար. 35. Տիգրանակերտ.  
 25. Հնդուց. 36. Քրդաստան.  
 26. Բալու. 37. Եղեսիա.  
 27. Զար - սանձաք. 38. Պաղտագ.  
 28. Խարթերդ. 39. Գաղատիա.  
 29. Խուզէ վանք և 2մշկածագ. 40. Զմիւռնիա.  
 30. Արագէեր. 41. Եղեսիա և Կրետէ.  
 31. Ակն. 42. Պանդրմա.  
 32. Քէմախ. 43. Կուտինա.  
 33. Արդնի. 44. Պրուսա.  
 34. Կեսարիա.

Բ. ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ Ա. ԵՐՈՒՍԱԼԵՄԻ.

1. Ա. Երուսաղէմ. 4. Պէրութ.  
 2. Յոպկէ. 5. Կիպրոս Կղզի.  
 3. Դամասկոս.

Բ.

### ԹԵՄ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ.

1. Սիս. 8. Անտիոք և Պէլէն.  
 2. Ատանայ. 9. Խօղղատ.  
 3. Քերիա (Հալէպ) 10. Կիւրին.  
 4. Այնթապ. 11. Տիվրիկ.  
 5. Հաճըն. 12. Մալաթիա և Պէչէսնի.  
 6. Մարտ. 13. Տարէնտէ.  
 7. Ջէյթուն.

Գ.

### ԹԵՄ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ.

1. Աղմամար. 2. Կարկար.

26 Օգոստոս 1866. Պատրիարքարան Հայոց Կ. Պօլիս:  
 Թիւ արձանագրութեան 275.  
 (Ստորագրած են)

Պատրիարք Կ. Պօլսոյ Պօղոս Արքեպիսկոպոս

Ատենապետ Երեսփոխանական ընդհանուր  
 ժողովոյ Հայոց Գնդապետ Բարունակ Պէ-  
 րուչէեան:

Ն. Յովհաննէս վարդապետ Սէթեան փոխա-  
 նորդ միաբանութեան Աղթամարայ:

Սիմէօն վարդապետ Սէֆէրեան փոխանորդ  
 Ա. Երուսաղէմի:

Նիրսէս Եպիսկոպոս Վարժապետեան փո-  
 խանորդ միաբանութեան Սոոյ:

Սինօդը ընդունելով յիշեալ թղթերը 1866 Սեպտեմբերի 16-ին որոշումէ . «Զներկայ գրութիւն Պատրիարքին Հայոց Կ. Պօլսոյ ընկալեալ ի տեղեկութիւն՝ կցել ընդ գործոյն։ Իսկ ըստ որում ի վերոտողեալ գրութեան անդ նշանակին 130 ձայնք ըստ թուոյ 65 վիճակաց Հայոց Տաճկաստոնի, սակայն Սինօդիս նոյնպէս և տէրութեան Ռուսիոյ յայտնի են միայն 45 վիճակք, որպէս և ընկալեալ է յընտրութեան նախկին կաթուղիկոսի ամենայն Հայոց Տեառն Մատթէոսի, վասն որոյ և ի ներկայ ընտրութեան ևս ընկալնուլ ըստ առաջնոյն ի հաշիւ ձայնից միմիայն զ45 վիճակսն. իսկ վասն մնացեալ 20 վիճակացն Սոյց Աղթամարայ, Երուսաղէմայ և Գանուբեանց յիշատակելոց ի վեր անդր գրութեան, առնել զորչումն զկնի ընտրութեան և հաստատութեան նորոյ կաթուղիկոսի Աղջիս կարեոր Խորհրդակցութեամբ զայս վսեմ խնդրոյս ընդ նորին Վեհափառութեան, որոյ վասն և տալ յիւրումն ժամու զառանձին զեկուցումն անկախ յայսմանէ. և զայսմանէ յայտնել գլխաւոր կառավարութեան փոխարքային Կովկասու»։

Յիշենք որ Տաճկահայոց կողմից յատուկ յանձնարարող կանոններով պատգամաւոր եկան ներսէս Եղիսկոպոս Վարժապետեան եւ Յակովի նորատունկեան։

Արդէն յայտնի է Սեպտեմբեր ամսատետրից աշխարհական պատգամաւորի ընտրութեան ձեւը. այս անգամ միայն պէտք է նկատել որ Կովկասեան փոխարքայի քրթարերական հրամանին համեմատ. աշխարհական պատգամաւորների ընտրութիւն կատարուել է ի ներկայութեան քաղաքական աստիճանաւորի։

Թողնում ենք մահրամասնութիւնները, որոնք յայտնի են արդէն նախորդ հրատարակութիւններով։

Կաթուղիկոսի ընտրութեան ժողովին ներկայ են եղել.

### Ա. Անդամք Ախնօդի

1. Տեղակալ Ատենապետի Սինօդի Գէորգ Արքեպիսկոպոս Վեհապետեան
2. Յովհաննէս Արքեպիսկոպոս Ասլանեան։
3. Գրիգոր Արքեպիսկոպոս Յովհեան։
4. Գէորգ Արքեպիսկոպոս Մկրտչեան։
5. Յովհաննէս Արքեպիսկոպոս Արշարունի, նոյն և պատգամաւոր Պարսկաստանի և Հնդկաստանի վիճակաւորի կողմից։
6. Թագէոս վարդապետ Զիւնական։
7. Պօլոս վարդապետ Տէր Մարգարեան։
8. Գրիգոր վարդապետ Մուշեղեան։

Բ. Ա. Էջմիածնի միարանութեան կողմից։

9. Արէլ Արքեպիսկոպոս Մխիթարեան։

10. Գրիգոր Արքեպիսկոպոս Խաչակինեան:
11. Գրիգոր Եպիսկոպոս Սագինեան:
12. Յովհաննէս վարդապետ տէր Յարութիւնեան:
13. Սարգիս վարդապետ տէր Գասպարեան
14. Կարապետ վարդապետ տէր Գալստեան:
15. Գրիգոր վարդապետ Նշափիրեան:

Գ. Ռուսահայոց վիճակների պատգամաւորներ.

16. Մատթէոս Արքեպիսկոպոս Վեհապետեան և }  
17. Աստիճանաւոր պ. Սարգիս Եղիայեանց. } Աստրախանու:
18. Մակար Արքեպիսկոպոս և }  
19. Նադօրնի Յօվետնիկ պ. Յովհաննէս Ամբաղեան. ) Թիֆլիզի.
20. Սարգիս Արքեպիսկոպոս Զալալեան և }  
21. Յովսէփ բէկ Մէլիք Շահնազարեան. ) Ղարաբաղու:
22. Մէրտիչ Արքեպիսկոպոս Բարամեան և }  
23. Պօրուչիկ պ. Արսէն Սուլթան Գեղամեանց. } Երևանու:
24. Դանիէլ Արքեպիսկոպոս Շահնազարեան. ) Շամախի:
25. Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան և }  
26. Յակով Էֆենդի Նորատունկեան. ) Տաճկահայոց:
27. Յակով Աւագ Քահանայ տէր Կարապետեան և }  
28. Ծառուր Խան Սելջ - Խանեան. ) Ասրագատականի:
29. Կոլէժսկի Սելիրետար պ. Ստեփաննոս Սամուէլեան. ) Պարսկաստանի  
և Հնդկաստանի աշխարհականների կողմից:

### Բացակայ էին

Ա. Բեսարաբիայի վիճակաւոր Արքեպիսկոպոս Եղաղար՝ որ  
իւր Օգոստոսի 22-ին գրութեամբ իւր ձայնը յանձնումէ Սինօ-  
դին եւ Ս. Էջմիածնի միարանութեանը:

Բ. Բեսարաբիոյ աշխարհական պատգամաւոր Ժառանգական  
պատուամեծար քաղաքացի Կարապետ Մարգարեան Հայրապե-  
տեանց՝ ըստ կարողանալով՝ անձամբ ներկայանալ Ժողովին իւր՝  
Սեպտեմբերի 6-ին գրած յայտարարութեան ընտրելի առաջար-  
կումէ Վարագայ սուրբ Խաչի վանահայր Խրիմեան Մկրտիչ վար-  
դապետին:

Գ. Շամախւոյ թեմի աշխարհական պատգամաւոր Ստատուկի  
Խօվետնիկ բժիշկ Դաւիթ Ռօստոմեան՝ տարափոխիկ հիւանդու-  
թեան պատճառով՝ պարտաւորուած լինելով մնալ Բաքուում  
իրեւ նահանգական բժիշկ՝ իւր ձայնը առանձին յայտարարու-  
թեամբ յանձնումէ Սինօդին:

Փոխարքայի № 204 ի 20 Օգոստոսի գրութեան համեմատ ի  
ներկայութեան Փոխարքայի խորհրդարանի անդամ Դէիսովի-

տեղնի Ստատուկի Սօվետնիկ Զիլիայելի եւ Սինօդի Պրօկոռօրի Սեպտեմբերի 17-ին սկսվումէ ընտրութեան համար ժողովը՝ պաշտպանելով այն բոլոր կարգերը՝ որոնք արգեն յայտնի են նախկին յօդուածներով:

### ԸՆՏՐԵԼԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՆ ԷՒՆ.

Ռուսաստանից

Արտասահմանից (Տաճկաստանից):

- |   |  |
|---|--|
| 1. Մատթեոս Արքեպիսկոպոս զի-<br>ճակաւոր Առաջնորդ Հայոց<br>Աստրախանու,                        | 1. Գէորգ Արքեպիսկոպոս Բրու-<br>սայու Նախկին Պատրիարք<br>Հայոց Կ. Պօլսոյ, |
| 2. Գէորգ Արքեպիսկոպոս տեղա-<br>կալ Ատենապետի Սինօդի,  | 2. Խսայի Արքեպիսկոպոս Պատ-<br>րիարք Երուսաղէմայ,                         |
| 3. Մակար Արքեպիսկոպոս վիճա-<br>կաւոր Առաջնորդ Հայոց Ալ-<br>բաստանի և Եմերէթիոյ վի-<br>ճակի, | 3. Իգնատիոս Արքեպիսկոպոս վի-<br>ճակաւոր Առաջնորդ Ասո-<br>պուրական Երկրի, |
| 4. Սարգիս Արքեպիսկոպոս զի-<br>ճակաւոր Առաջնորդ Հայոց<br>Պատրիարքու,                         |  |

Այս ընտրելիներից՝ Մատթեոս Արքեպիսկոպոսը ստանալով 28 ձայն եւ Բրուսայու Գէորգ Արքեպիսկոպոսը 118 ձայն՝ համարվումեն առաջարկելի կաթուղիկոսութեան համար:

Ընտրութիւնը կատարելուց յետոյ կազմվումէ հետեւեալ օրագրութիւնը.

\* Ե 17 Սեպտեմբերի 1866 ամի ժողովն Արքաղան Արքեպիսկոպոսաց Եպիսկոպոսաց, բարձրապատիւ Վարդապետաց և ականաւոր աշխարհական պատգամաւորաց ի վիճակացն Ռուսաստանի և Տաճկաստանի, գումարելոց ի Տաճարի Սրբոյ Էջմիածնի վասն ընտրութեան Ծայրագոյն պատրիարք Կաթուղիկոսի ամենայն Հայոց բացեալ ի սոյն թիւ զատենակալութիւն իւր առ ի գործ ընտրութեան Կաթուղիկոսի ամենայն Հայոց կանոնաւորեալն կարգաւուր և ընթերցեալ զանուանն ականաւոր Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց ի սահմանս Ռուսաց, Թուրքիոյ և Պարսից գտանեցելոց, և յետ պատշաճականն սմին իրի ատենախոսութեանց, կայացաւ ընտրութիւն չորից ընտրելեաց ( կանգիտատաց ազգիս ) յաստիճան կաթուղիկոսութեան, որք են՝ Գէորգ Արքեպիսկոպոս Պրուսայու Նախկին Պատրիարք Կ. Պօլսոյ, Խսայի Արքեպիսկոպոս այժմեան պատրիարք Երուսաղէմայ, Մատթեոս Արքեպիսկոպոս վիճակաւոր Առաջնորդ Աստրախանայ և Իգնատիոս Արքեպիսկոպոս Ա-

ռաջնորդ Վ. ասպուրականի, որոց վասն և կազմեցան ուրոյն ուրոյն ընտրական թերթը ընդ ստորագրութեամբ անդամոց ժողովոյն, և յիտ այնք համաձայնութեամբ ժողովոյն արժանի եղեն կոչման աւագագոյն ընտրելեաց ( կանգիտատաց ) երկուքն ի նոցանէ բարձր Սրբազան Գէորգ Արքեպիսկոպոս Պրուսայու և Մատթէոս Արքեպիսկոպոս վիճակաւորն Աստրախանայ Հայոց ըստ առաւելութեան ձայնից, տուելոց յօգուտ նոցա վասն որոյ ժողովն եկեղեցականաց և աշխարհականաց սահմանիաց զոյն զայս ընտրութենէ Վեհափառ Պատրիարք Կաթուղիկոսի ազգիս և կանդիտատին անցուցանել յօրագիր, և վաւերացուցեալ ընդ ստորագրութեամբ համայն անդամոց ժողովոյն. յանձնել Սինօգին Սրբոյ Էջմիածնի առնել զիախեալն յինքենէ տնօրէնութիւն, որպէս պատշաճն է, ըստ օրինագրեալ կարգին.

### Ստորագրութիւնք.

« Ես՝ պատգամաւոր ի զիմաց համայն եկեղեցականաց ամենայն վիճակացն Ս. Էջմիածնի, և Կաթուղիկոսութեանցն Սոյ և Աղթամարայ և պատրիարքութեանն Սրբոյ Երուսաղէմի, ըստ հրահանգին տուելոց ինձ յազգային ժողովոյ պատրիարքութեանն Կոստանդնուպօլիսոյ ընտրեցի Կաթուղիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն պատրիարք համազգական Մայր Եթոռոյ Երարատեան Սրբոյ Էջմիածնի՝ զամենապատիւ զՏէր Տէր Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոսն Պրուսայու, և ոչ զոք կանգիտատ։

« Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան։

« Նոյնպէս և ես պատգամաւորս ի զիմաց ամենայն ժողովրդականաց վերոյիշատակեալ վիճակաց կայսերութեան Տաճկաստանի ընտրեցի Կաթուղիկոս՝ զտէր Գէորգ սրբազան Արքեպիսկոպոսն Պրուսայու և ոչ զոք կանգիտատ։ Յակոբ Պ. Նորատունկեանց։

« Պատգամաւոր Վարաբաղու, Յովսէփ բէկ Մելիք Շահնազարեանց։

« Պատգամաւոր Երևանու Հայոց վիճակի պօրուչիկ Արքն Սուլման Գեղամեանց։

« Պատգամաւոր վիճակին Վրաստանի և Խմբեթիոյ Ստատսկի Առվետնիկ Յ. Պայթմազեանց։

« Պատգամաւոր Աստրախանայ վիճակի Կոլէժսկի ասսէսօր Արքիս Կոչայեան։

« Պատգամաւոր Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց Կոլլեժսկի Սեկրետար Ստեփաննոս Սամուէլեան։

« Պատգամաւոր վիճակի Ատրպատականի Հայոց սուրհանկ առաջին աստիճանի և ատուտանդ Ծատուր իսան Սէթ—իսանեան։

« Պատգամաւոր ի կողմանէ հոգեորականութեան Հայոց Ատրպատականի տէր Յակովը աւագ քահանայ տէր Կարապետեան։

« Պատգամաւոր ի կողմանէ միաբանութեան Ս. Էջմիածնի Գրիգոր վարդապետ Աղափիրեանց։

« Անդամ Սինօգին սրբոյ Էջմիածնի Գրիգոր վարդապետ Մաւշելեանց։

- «Պատգամաւոր ի կողմանէ միաբանութեան սրբոյ Էջմիածնի Կարապետ վարդապետ տէր Գալստեանց»;
  - «Պատգամաւոր ի դիմաց միաբանից Էջմիածնի Սարգիս վարդապետ»;
  - «Անդամ Սինօդի Պօղոս վարդապետ տէր Մարգարեան»;
  - «Անդամ Սինօդի Թադէոս վարդապետ»;
  - «Պատգամաւոր ի կողմանէ միաբանութեան սրբոյ Էջմիածնի Յովհաննէս վարդապետ տէր Յարութիւնեան»;
  - «Պատգամաւոր ի կողմանէ միաբանութեան սրբոյ Էջմիածնի Գրիգոր Եպիսկոպոս Սագինեան»;
  - «Պատգամաւոր ի կողմանէ Հայոց Հոգևորականաց Երևանայ թեմի Մկրտիչ Արքեպիսկոպոս»;
  - «Պատգամաւոր ի կողմանէ միաբանութեան Էջմիածնի Արէլ Արքեպիսկոպոս»;
  - «Պատգամաւոր ի կողմանէ միաբանութեան սրբոյ Էջմիածնի Գրիգոր Արքեպիսկոպոս Իսահակեանց Երևանցի»;
  - «Պատգամաւոր ի կողմանէ Հոգևորականութեան Հայոց Ասպահանու և Հնդկաստանի անդամ Սինօդի Յովհաննէս Արքեպիսկոպոս Արշավոռնի»;
  - «Անդամ Սինօդի Գէորգ Արքեպիսկոպոս»;
  - «Անդամ Սինօդի Գրիգոր Արքեպիսկոպոս Յովհեանց»;
  - «Անդամ Սինօդի Յովհաննէս Արքեպիսկոպոս Ասլանեանց»;
  - «Պատգամաւոր Հոգևորականաց Հայոց Արձախու Արքեպիսկոպոս Սարգիս»;
  - «Տեղակալ Ատենապետի Սինհոգոսի Գէորգ Արքեպիսկոպոս Վեհապետեանց»;
  - «Պատգամաւոր ի կողմանէ Հայոց Հոգևորականաց Աստրախանայ թեմի Արքեպիսկոպոս Մատթէոս»;
  - «Պատգամաւոր ի դիմաց Հայոց Հոգևորականաց Վրաստանի Մակար Արքեպիսկոպոս»;
- Ստորագրութիւն Պրօկուրօրի
- Ստորագրութիւն Ատենադպրի
- Սինօդը Սեպտեմբերի 17-ին առանձին զեկուցմամբ ընտրութեան ժողովների հետեւանքը Փոխարքային ներկայացնելու համար կարգումէ Գրիգոր Եպիսկոպոս Սագինեանցին Թիֆլիզի պատգամաւոր Ստատուկի Յովհեանիկ Գայթմաղեանին եւ Արձախու պատգամաւոր Յովհաէֆ բէկ Մելիք Նահնազարեանին:
- Սինօդը Կովկասեան փոխարքայի 1866 թուի Դեկտեմբերի 29 ին № 301 գրութիւնից խմանարգ որ Պրուսայի առաջնորդ երբեմն Պօլոյ Պատրիարք Գէորգ Արքեպիսկոպոսը ըստ ընտրու-

թեան Սեպտեմբերի 17-ի ժողովին՝ ճամաչուել է կաթուղիկոս ամենայն Հայոց թագաւոր կայսրից եւ արքէն կարգադրութիւն եղել է արքունական հրովարտակի համար, ուստի եւ ուրոյն ուրոյն գրութեամբ 1867 թուի Յունիարի 2-ին յանուն Պատրիարքի եւ Կեղրօնական վարչութեան Կոստանդնուպօլսոյ ծանուցանումէ նորընտիր Կաթուղիկոսի ընտրութեան եւ հաստատութեան հանդամանքը; Յայտնումէ նաեւ որ արքէն Յունիարի 1-ից Յիշուել է եկեղեցում նորընտիր Հայրապետի անունը եւ գոյացողական մաղթանք է կատարուել Ռուսաց կայսերական տան բարորութեան եւ թագաւոր կայսեր թանկագին կենաց համար:

Մինօդը նոյն Յունիարի 3-ին գրումէ նաեւ նորընտիր կաթուղիկոսին պատշաճական գիր, եւ Յունիարի 16-ին ի նկատի ունելով Սինօդի Ատենապետի Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոսի գրութիւնը նորընտիր Հայրապետին ընդառաջելու համար՝ նշանակումէ Հրաւիրակ Արձախու վիճակաւոր Զալալեան Սարգիս Արքեպիսկոպոսին, Սինօդի անդամ Գրիգոր վարդապետ Մուշեղեանին եւ Սինօդի թարգման աստիճանաւոր Նիկողայոս տէր Յովսէփեանին, եւ այս մասին յայտարարութեամբ տեղեկութիւն է տալիս նորընտիր Հայրապետին:

Նորընտիր Հայրապետը 1867 թ. Մայիսի 12-ին հասնումէ Ս. Էջմիածին եւ նոյն Մայիսի 21-ին երդվեմէ ըստ օրինի ու Ս. Օծումն ընդունում եւ այնուհետեւ սկսումէ վարել իւր Հայրապետական իշխանութիւնը:

Նորընտիր Հայրապետին Կոստանդնուպօլսից մինչեւ Ս. Էջմիածին Կ. Պօլոյ Կեղրօնական ազգային վարչութեան կողմից պատրիարքարանի յանձնարականով ուղեկից նշանակուած էին Յովհաննէս Սէթեան եւ Խորէն Գալֆայեան վարդապետներն ու Յարեթիկ Նէվրուգեան եւ Մազաք Մուրատեան Էֆէնտինները:

Տէր Գէորգ Դ. Կաթուղիկոս Ս. Օծումն ընդունելուց յետոյ նոյն թուի Յուլիսի 10-ին կոնդակով պատուիրումէ Սինօդին Ս. Պէտերբուրգ գնալու եւ վերադարձի ծախուց համար կարգադրութիւններ անել: Եւ ինքն նոյն Յուլիսի 12-ին ինչ ինչ պաշտօնական կարգադրութեան համար մի կոնդակ եւս տալով Սինօդին սկսումէ իւր այցելութեան գործը Ալէքսանդրապոլի վերայով ուղի հատանելով:

Յուսիկ վարդապետ: